

ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՆԻՐՈՒՄ

| | |
|----------------------------|--------|
| Պաշտարանի համար | 12 ֆր. |
| Վեցամսեայ | 7 " |
| Արտասահմանի համար ստանկում | 15 ֆր. |
| Վեցամսեայ | 8 " |
| Անհատի համար | 6 ֆր. |
| Վեցամսեայ | 3 ֆր. |
| Վեցամսեայ | 1.50 " |

Ի սահմանում այդ և ուրիշ երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեսին և էլի անգամներու համար 20 0/0 զեղք կը լայ:

Վաճառքի համար ձեռք 40 սանթիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳ՝ՅԻՆ. ԲԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐՋՈՒՄ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ և գրամ որ կը խմբագրուրեն հասցեին

Редакция на вѣстникъ "Шаржумъ," Варна

Redaction du journal "Charjoun," Varna (Bulgarie)

Պաշտարանի համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և չեռ տուր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՆԻՐՈՒՄ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԵՒԻ ԿՃԱՐԷ

«ՏՈՒ ՏՄԻՐԻ Հ. Բ.

ԴԼԵՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՉՊ

Արդէն այս անունով բարոջիւրր յանձնված է ապագայութեան:

Բարոջիւրրի նպատակն է, առանց խժժանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ գնել իր իսկութեամբ և միեւնոյն ժամանակ փաստել թէ՛ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպորանք ընդունեց. ինչպէս է որ բարոջիւրրի մէջ փաստող զօկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն:

Բարոջիւրրի գրինը ապագայութիւնից վերջ 3 ֆրանկ է ինչու. իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր.:

Դիմել Եւրոպայի Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գրտնուի Վիեննայի Թրանց Ժողովքի քառափն վրայ. կը ստանայ վառազան հայերէն թերթեր. Սա հասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ս. ստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին գիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւններ:

ԱՆԲԱՐՈՑԱԿԱՆԱՑ—ՆՈՂ ՍԹՆՈՒՈՐՏ

«Նարժում» թիւ 827ի երկրորդ էջում ապագրվեց խ. ժակի (Բարա-Կասպարի) նամակները. դրանցից առաջինում, այսինքն Բրիտանոփոքին ուղղած նամակի մէջ այդ պարունը—զըրել էր հետեւեւոյ խօսքերը.

—Կրեա 90 թիւց ես ձեր ճակատին դրոջմել եմ իմ ասելիքներս և մոռացել ձեր գոյութիւնն ու ձգտումները. ինչ ուղղած նամակում—«եր-

կու տարի է բոլորովին քաշուած. սառնց ուն է յարաբերութեան ուն է գեղեցիկ հետ... կազ գեղեցիկ (ակնարկում է Բրիտանոփոքին) և այլ նման անձնաւորութիւններու լորովին զգուցարին, հաշտութիւն այլեւս ինչ անհնար է թուում...»

Այս խօսքերը Բրիտանոփոքի և Դաշնակցութեան վարչի համար վաճառքի մասին սողող յանկարծ մի քանի ամսից յետոյ, վեր է կենում Բրիտանոփոքի համար արտասահման գաճառական ճառեր գրում, և արանում կազմակերպութեան այն պակասութիւնները որոնց հետ հաշտուելն իսկ անհնար էին դարձել. Խաժակը (Բարա—Կասպար) գոհ հիկ մարդ չէ և ոչ էլ երեխայ. նա եւրոպայում իրբել թէ բարձրագոյն կրթութիւն ստացած և որոշ սկզբունքներով հասարակական գործերի մէջ մտած մարդ է. ու մենք տեսնում ենք. որ նա երեկվան զրգվելին և առելին այսօր յանկարծակի կարող է սիրել!!!

Անցեալ օրերում Դաշնակցական քոնիկում տեղափոխած Թիւրքի մի ընկերոջ նամակի մէջ կային հետեւեւոյ տողերը—

«Այսօրուան կացութիւնը այն վիճակին հասած է որ բողոքող տարբը տիւրի մայրի մը առջեւ կը գոռուի: Այն է կամ կազմակերպական շարքերուն մէջ մնալ և մնացողներուն պէս բարոյապէս ապակառուած միջնորդութեան ազատիւն և կամ թէ բոլորովին ձգել ու հեռանալ»:

Ուրեմն թէ համալսարանական Խաժակը (Բարա—Կասպար) ժողովրդի կրթիչ համարվող դասակարգի ներկայացուցիչներին մէջէլ և թէ Թիւրքի երիտասարդ ընկերները մեր կազմակերպութեան մասին, թէեւ մի քիչ տարբեր խօսքերով միեւնոյն կարծիքն են յայտնում. երկուսի մէջ տարբերութիւնը այն է որ Խաժակը վերջը կարող է գովասանքներ կարգաւ իրեն հասկացողութեամբ զգուցիւ անձ-

նաւորութիւնների կամ կազմակերպութեան մասին, այսինքն անբարոյա կանանալ. ապականւած միջնորդութեան, ինչպէս որոշում է Թիւրքի ընկերը... Չր մոռանաք Խաժակի ինչ ուղղած նամակին այս բը նորոշիչ տողերը.— «բարոյակա նութիւն, խիղճ ամենինչ ճրնչում է այդ լիբը փողը... Դեռ լաւ է քանի մեռակ ես... իսկ երկրորդը բուսնում է անմեղէակներ տհա այն ժամանակ միայն զըզելի է...»

Նոյն նամակի սկզբում Խաժակը գրում է. «Վերջապէս վճռում եմ նամակ գրել. Միջեւ սյժմ գեռ յոյս ունէի թեւ առնել թռչել... բայց մէկ երեխան կայ, երկրորդն էլ ճանապարհին է, զգում եմ որ կապված եմ»:

Այս խոստովանութիւնները արդէն պարզում են որ փողը, կամ ապրուստի ապահովութիւնը կարող են ստիպել Խաժակներին բարոյապէս զիջումներ անել... ընկերը, երեկվան զգուցիւն այսօր պաշտելի, երեկվան զխոսակարը այսօր օգտակար հոշակել... Իսկ եթէ Խաժակը, որ ապրելու համար անցեալ օր Բենիկ վարդապետի պաշտօնեան լինել զիջեց, այսօր ապրելու համար Բրիտանոփոքի տասնեակ տարիներով ժողովում գոյութիւնը յիշեց, անհնարին հաշտութիւնը վատ կազմակերպութեան հետ հարաբերութեան էլ ինչպէս չընդունել որ Դաշնակցութեան մէջ այսօր վիստում են անթիւ և անհամար այն տիպերը որոնք հացի մի փոքր հացի համար են դիմանում այն պակասութիւններին և թերութիւններին, որոնցով ախտաւորված կազմակերպութիւնը դիմում է դէպի կոյուստ:

Այսօր Խաժակը կովկասի գաշնակցական թերթերում է ճանում յեղափոխութեան, մաքրութեան, անկեղծութեան, անկաշտութեան և այլն բարեմասնութիւնների մասին, ինչը նախօրոք արդէն դաւաճա-

նած լինելով այդ բոլոր ութիւններին, որովհետեւ այժմ գուցէ երրորդ երեխան արդէն ճամբու վրա է...

Այս Թիւրքի ընկերը ճիշտ է ասում. բայց մոռանում է մի բան աւելացնել. թէ չպէտք է հեռանալ և ոչ պէտք է անտարբեր հանդիսատես մնալ ապակառուած կազմակերպական միջնորդութիւն մէջ, այլ պէտք է մաքառել, պէտք է ոգի ի բռնել խարազանել, յուզել այդ հոտած միջնորդը որոնք Խաժակներին անբարոյականացնելուց յետոյ, աւելի թոյլ են չը պատրաստուածներին, որոնք մեծամասնութիւն են կազմում մեր կազմակերպութեան մէջ, աւելի շատ կապական են կազմակերպութիւնը կաւերեն...

Այս Խաժակներինց աւելի շատ ընկերվողներ, աւելի ցեխատներ շատ կան. Դաշնակցութեան մէջ, ինչպէս ինքը Խաժակն է ասում, Դաշնակցութեան մէջ «նապաստանի սրտով պարսպիտները վիստում են և զժբխտաբար խեղճ Խաժակն էլ այդ շարքերի մէջ մտաւ փաստելու համար. իր անձնական օրինակով թէ՛ Դաշնակցութիւնը որքան վարակիչ ապակառուութիւններուն իր մէջ, որ մաքառող, պայքարող Խաժակներն իսկ կարող են—երկրորդ երեխան ճամբու վրա լինելու պարագային, լի բը փողից ընկեցիւ և ստեղծու ստեղծ:

Այս, շատ ցաւալի է, բայց իրողութիւն է...

Եթէ մեր ինտելիգենտ կրթված յեղափոխականները այսպէս են, էլ պէտք է երեւակայել թէ միսները ի՞նչ կարող են լինել:


Այս էվոլիցիան կարող է փրկել մոլայայդ գրութիւնից... Սակայն երբեմն էվոլիցիան դանդաղում է և ցնցումի պէտք է զգացվում... ահա այդ ցնցումն է որ մենք ուզում ենք առաջ բերել Դաշնակցութեան մէջ:

Հոտած ճահի մէջ եթէ չոր չաւելնայ—այդ ճահի մի փոքր բնական օրէնքի համաձայն պէտք

է երբեք ցէ գոյր չի աճայ և հոգը
ցամքի շորանայ, ապա շրջակայ
բնակիչներին չը վարակելու հա-
մար զանազան օխտերով, արեւս
տական սուռներ են բացանում
ճահճի վրէժը աւելի արագարար
ցամքը ցնելու համար...

ՎԱՐՊՈ

ԱՆԻՃԱՆՈՒԹԻՒՆ ԹԵ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ



Սուլթանի ու Ալֆոնսի Լահափոր-
ձերու առիթն այլևայլ րարգրութեանց
ու «Շարժում» 816 թիւ տեղեկու-
թիւններն սխալ աղբիւրներէ բխած
պէտք է ըլլան —

Երկրագունդի վրայ ո՛չ մի երկրի
մէջ չկայ անիւսանական մարմին
կամ ընկերութիւն որ թագակիր
մարդասպանի վրայ մահուան պատիժ
քուէարկէ, որչէ ու վճռէ

Անիւսանութիւնը օրէնսդիր մար-
մին չունի, սահմանադրական ամեն
ձեւ կը մեղծէ, քուէ փարլամենթա-
կան բոլոր դրութիւններն իսպառ կը
ծխալ...

Այն մարդը երբ ընկերութեան
մը կողմէն արիւնարբու վամբու իշ-
խանի մը վրայ մահու պատիժը կը
զործադրէ նա անիւսանական չէ,
այլ պայմանադրական վարձկան մէջ

Անիւսանականներն ոչ միակեան՝ ր
ոչ նախագահներ եւ ոչ ալ ներկայա-
ցուցիչ պատգամաւորներ ունին

Անիւսանութիւնը ազատ բաց դուռ
է: Անիւսանականներու որակն, բազ-
աւատմամբ հակայնորէն քանակին,
ինչպէս Ամերիկայի մէջ ու ընդ ոլորդս
աշխարհի վսեմ է:

Անիւսանականներն տիպոսներու
— բռնակալներ — է դրած կեղծ ազ-
նուականութեան աստիճաններ — /չ

խան քոնդ — տի. ք. մարքիզ րարտ,
խան, պէյ, էֆէնտի չունին — մեր ըն-
կերուս կուրծքի վրայ. Արծի. ի.
Պետրոսի, Օսմանիէի, Առիւծի Սա-
նակապի շքանշաններ չենք փնտռեր
այլ աղիւն նկարագիր, մտքի կարո-
ղութիւններ ու բոլոր ճնշուածներու
համար զոհողութիւններ...

— Արտասահմանի իշխանական
նեղ շնչումներով մարդուած հայ թեր-
թեր ու թղթակիցներ շատ անգամ-
ներ պարզ իրողութիւններ կայացու-
նեն թագուն վերապահումներով...
— գոյժ մ' որ յեղափոխական աստի-
շուութիւնէ հետի է...

— Երբ հայ ֆէսային Սասնոյ լան-
ճերին, Մշտն դաշտին խուճու գիւճա-
բան բռնեց — երբ թուրք զինուորն
Նըլաղի հրամանաւ գիւղիւր ու ա-
ւաններ ըրգեհնցին բանաւոր անմեղ
հայերով լեռնցիւն, երիտասարդներ
հետու... անձնօթ վայրեր տա-
րադրեցին. երբ Ղուբանի մոլեղնած
խուճանը հայ կիներ ու աղջիկներ
անհուն նախճիրներու ենթարկեցին —
Մօտեր պնակալից մը Տօն ֆիշոտի
հովերով կուսակցական սեղափոխա-
կան սէլայնի. ք. թերթին կը սե-
ղեկադրէ «Սասնոյ մէջ անիւսանու-
թիւն» կը տրէ:

Թիֆլիսի սեղաւտ Սահմանադրական
թերթը իր օրը օրին իմքապրական
ներով, փոխարքայի պարտան մէջ —
Հայ թախար գաստստանական հա-
մարուած ժողովին մէջ — Հայ-թա-
թար ներկայացուցիչներու երկուս-
տեք անողք փոտտերով կը հաստա-
տեն թէ իշխանութիւնն է ամեն ոճի-
րին եւ բոլոր չարքներու սղբերա-
ցու մը...

Նոյն րարեհամբա. օրաթիթր այլ
եւայլ ձեւերով ել կրին տազնապաի
փիճակն — Անիւսանութեան կը վերագ-
րէ

Համիտի ու Նիքոլայի զինուորներ,
կայսերական կենդրոնական, հրա-
մաններով ամեն այլանդակ նախճիր

կը գործադրեն խմբագիրներ ու թրդ-
թակիցներ անամօթ ստախօսութեամբ
անիւսանութեան կը վերագրեն. —
Ալֆոնսի մահափորձը՝ Պօսթոնի
Ջոյն Հայրենեացը՝ տխուր սուգով է
համակած... Նոր իշխաններու ճը-
նուէրներն, զատուցներու գործերն
հազիւ կրնան մխիթարել իշխանական
ասպետութիւնը՝ այդ խմբակիր սթի-
ւականը՝ խլած է:

— Անիւսանութիւնը՝ տիրական
ընթացք չունի ստրուկի ու ծառայու-
կան բմունտի մեքուռ ղէմ կընդվզի
— Ազգելու վիշտերն ժողովուրդ
ներու ցուերն ու պատակտու մեքուռ
հովը ու անհուն նախճիրներն իշխա-
նութեան պատմութեան էջերն կը
կազմեն. մեր առօրեայ կեանքը սյա-
ան-դոք իրողութիւններն կը բա-
ցատրեն

Իշխանութիւններն իրենց հպտակ
ժողովուրդներու խնդրանքին, անս-
գորոյն այլ ինով կը պատասխանեն
... ..
... ..

Անիւսանականներն հայ ծուած
մարդկութեան կեանք եւ կենդանու-
թիւն կորստան

Իշխանութիւններն իրենց երկրի
աշխատատիրներու վրայ ծանր տուր
քեր, անասնաման վիշտեր ու պատե-
րուցիւր կը հրատարակեն.

Իսկ անիւսանականներն ընկերա-
յին, սնտեսական ազատութիւններ
կը հոչակեն.

Իշխանութիւնը՝ աստուածային ու
փարլամենթական ջլատիչ օրէնքներ
կը ծանուցանեն

Անիւսանականներ յեղաշրջումներ,
յեղ-փոխութիւններ կը յայտարարեն.
Իշխանութիւնը ունի բանտեր զօ-
րանոցներ — անիւսանութիւնը ունի
ազատ բեմեր —

Իշխանութիւնն ունի գերի զին-
ուորներ — անիւսանութիւնն ազատ
ընկերներ

Իշխանութիւններու մարտանաւեր,
թըղտնօթներ աշխարհաւեր ամեն տե-
սակ ղէնքեր.

Անիւսանութիւնն ունի ժողովուրդներն
գիտակցութեան հասցնող մարտեր եւ
վսեմ գրականութիւններ

Իշխանութիւնը՝ կը ճնշէ անիւսա-
նութիւնը՝ հրամաններուն մէջ
ապտամբութեան կայծերն կը հրահ; է
Իշխանութիւնը՝ կրօնի փրկստիչա-
յութեամբ կը նախապայտէ — անիւ-
սանութիւնը զիտութեան լոյսերով
ժողովուրդներն սղախութիւնէ կը
փրկէ —

Իշխանութիւններն մեհան եկե-
ղեցի՝ մզկիթ կը հիմնեն, ազգերու
հաւաքական մտքերն կաշկանդելու
համար

Անիւսանականներն ազգերու գր-
ական սարուկ ոճերն ի հիմն կը
տապալեն, որոշք մեր զգացումներու
զարգացարկուն ազատ փոխներու
չեն համապատասխաներ.

Իշխանութիւնը թէ լինի միակե-
տական, կամ սահմանադրական հան-
րապետական կամ հանրապարտական
հաւաքական ճղճիթ խառնուկութիւն-
ներ են.

Անիւսանութիւնը ներգանակ հա-
մաձայնութիւն է իշխանութիւնը ժո-
ղովուրդներու սրտին վերայ վէրքեր
կը բանայ անիւսանութիւնը բոլոր
փտութիւններն կը կտորատէ ու ամեն
միքուտներ կը բուծէ:

Իշխանութիւնը՝ երկրային ու երկ-
նային բոլոր ղեկնակալութիւնները՝
կը ճատագովէ

Իսկ կարմիր անիւսանութիւնը, ա-
զատութեան օթեւանն ու խանձա-
րուրն է:

Անիւսանութիւնը հարամարդկա-
յին Սէր-միջազգային եղբայրութիւն
ընկերային հասանալիութիւն է:
Մեր հայրենիքը երկրագունտն ու
մար ազգը մարդկութիւնն է Անիւսա-
նութիւնը կեանքի բանաստեղծու-
թիւնն է:

ՎԻՊՍՕՐ ՎԱՐԴ ՎՐՈՅՐ

Ս. ՅՈՒԼԱԿ
ԱՐՅՈՒՆԻՍ ՊԱՏԱԻՆԵՐ
— — —
Ա
ՊԱՏՐԱՆՔԸ
— — —
(Բարկազայ կեանքէ)
Բոլոր մարդոց ղէմքերը ճշմա-
րիտ են, ինչ ալ իրենց
ձեռքերն ըլլան.
Սյլ չկայ երբէք ճշմարիտ
կրն մը՝ ճշմարիտ ղէմքով:
ՇԵՅՄՍԻՐ
4
Անվարժ այգիի կրքոտ ու յայ
րատ կեանքի տաղտուկներուն, ա-
ռողջութիւնն եւս զգոյի փոփոխու-
թիւններն կը կրան: Փոխուած էր
Վոսփորի զեղածիճաղ ափերու հա-
րուստ կլիմային տակ, պարկեցու ու
խաղաղութիւն ապրող Արսէնը: Մէկ
կողմէն դասեր պատրաստելու ամուլ
ճիգերը, միւս կողմէն յաֆէններու
պարահանդէսներու ապականիչ մթնո-
լորտը միաբուրուած անկանոն ննջա-
ժամերու եւ յուզումնալից գիշերնե-
րու, մեծապէս ազդած էին կազմին,
նիհարութեան նշաններ, դունատու-
թիւն տիրապետած էին զինքը: Այ-

սուհանդերձ անփոյթ էր ան այս
բոլորին — միայն թէ իր երջակու-
թեան լոկ պայմանը նկատած էակը
մնար մօտը: Համաձայն մօր վերջին
պատուէրին, նամակներ յաճախակի
կը տեղացնէր Պօլին, ու չէքեր, սու-
ոէ ամիս, մերթ շարթէ շարթէ, ա-
ռատօրէն կը գանձուէին Քոչէտի-
Լիօնի վրայ:
Անժէլ, այժմ իր հին պաշտօնա-
կիցներու նախանձի առարկան դար-
ձած՝ այսպիսի երկնառաք բաղդի մը
արժանանալուն, օր բոտ օրէ, փո-
խան առաւել զոհողութիւններու կը
դառնար անհանդուժելիօրէն պա-
հանջկոտ: Նախկին երկու հոյտկապ
սենեակներուն փոխանակած էին քօ-
քէթ յարկ մը երեք սենեկով, ան-
մրցելի ճաշակով մը կահաւորուած:
— ննջարան ըլ գունարան եւ զար-
դասենեակ, Քանի Արսէն կը դառնար
հեզ ու համակերպող, օրիորդ այն.
քան կը ծանրացնէր իր ընտանեկա-
կան իշխողութիւնը:
Սովորական վարմունքն է սա Բա-
րիդի այդ գասին պատկանող հերո-
սուհիներուն: — Յաճախ փողոցները
անօթի վազվառուղ աչք կամ այն ան-
ձանօթ զատարկարարութիւն արտա-
րութիւն, օրական չոր հացի կարօտ,
բաղդի խորհրդաւոր դիպուածով մը
բարձրանալով ու եւ աստիճանի, —
որովհետեւ աստիճան մըն է անոնց
համար փողոցի մայրճանճի զիրքէն

հասնիլ մինչեւ պարահանդէսներու
եւ քֆէներու առօրեայ հերոսուհին
դառնալը. — այն բոլորը, ինչ որ ա-
նօթի երեւակայութիւնը կրնար մը-
տարերեւ, իրարմտ առիթին չեն զը-
լանար բրակաւորութեան փոխելու,
մանաւանդ որ ձեռքերին իրկած
որը, զրգանի ճոխութեան հետ,
ունի նաեւ ուղեղի պակասութիւն:
Այս էր պարագան նոյնպէս Անժէ-
լի համար, իսկ Արսէն կը տանկը
լուս, յո. սալով սեսնել անոր ան-
ւան ու արտաքինին տակ իսկական
հիշտակ մը եւս ներսէն: Ձո՛ր
պատրանք Համբարձ էր ու անտե-
սել փորձած մի քանի յայտիտի ղէպ
քեր՝ զար ուրիշներ պժգանքով պի-
տի սարսափահարէին ճարած էր ան-
բողք անոր յաճախակի բացակայու-
թիւնները, նոյն ամբողջ գիշերով,
առանց ամենաթեթեւ պատրուակ
ներկայացնելու. առանց նախապէս
յայտանելու:
Իսկ այս բոլորին հանդէպ, ոչ
մէկ զոհողութիւն ուղկան կողմէ, ոչ
մէկ համակերպում ոչ մէկ քաղցրա-
բարոյ վարմունք:

սին միջնանշաի երկանս:
Անժէլ զարգասենեակն էր, սովո-
րականէն երկար՝ թեթեւ թուակթի
մը համար: Պահ մը վերջը մտաւ
ներս շքեղօրէն հագուած ու արդու-
զարգուած:
— Ա՛հ, անձան հրեշտակս, գո-
չեց երիտասարդը, ոտքի ցատկով
ու զանի գրկելու փորձ մը ընելով.
բայց օրիորդը, ձեռքի հրամայական
ժեսով մը կեցուց:
— Բաւական է յիմայութիւններդ,
ատոնցմէ կը հասկնամ...
Արսէն այլապէս ղէնի դիտեց:
— Անժէ՛լ... դոնց, քայլ մը առ
նելով յառաջ, սակայն միեւնոյն հր-
րամայող շարժում մը, աւելի դառն ու
դաժան նայուածքով մը, կանգնե-
ցուցին երիտասարդը:
— Ա՛հ, չիթթած ես, կը զարմա-
նաս...
— Անժէ՛լ, ի՞նչ է նպատակդ, ի՞նչ
է յանցանքս...
— Արքան այ միափոտ հօրցում,
որպէս թէ կարելի էր պարտիլ իրա-
կանութիւնը:
— Աստուծոյ սիրոյն, Անժէ՛լ, թող
մէկ կողմ միատեղականութիւնը եւ
յայտնէ խոնուութեանը շարժաթիթ:
Ի՞նչ ըրի քեզ վշտացնող, ըսէ, սի-
րելիս. պատրաստ եմ ամենայն սի-
րով քաւել այդ ակամայ սխալս, ե-
թէ գոյութիւն ունի այդպիսի բան
մը...

ՆԱՄԱԿ ԼՈՒՏՈՒՆ

23 Յուլիս

ՅԱՐԻ ՈՒՔԱԶՐ.—

Անգլիական մամուլի կարծիքը.

Նիքոլայ Յարր, իր յուլիս 8 (5 տ.) ութագրով, համաձայն հիմնական օրինակն 105 յոդուածին՝ որով Յարր իրաւունք ունի հակառակ պարագային լուծել Տուժան, ի գործ դրաւ իր իրաւունքը, այսինքն լուծեց զայն Ներքեւ կը թարգմանենք այդ ութագր իր իսկով թեամբ և ամբողջութեամբ, ցոյց տալու համար փաստաբանութեան բացարձակ ճշդոյթի թիւը և պարտկոտած միջին ծրագրի ճշդը հոն.

ՈՒՔԱԶ.

Կոչ ըրինք ժողովրդի ներկայացուցիչներուն մեր կամքով՝ մասնակցելու օրէնսդրական գործին՝ լատա ելով շերտապէս երկնային բարեփոխութեան և հաւատարմով մեր ժողովրդի ձեռն փայլուն ապագային վրայ, բարեփոխելու կարողութիւնը երկրին համար իրենց աշխատանքէն: Մեր մեծագոյն հոգը նուիրած ենք միշտ սղիստութեան բարձրագոյն ժողովրդին մէջէն՝ զատախարակութեան լոտով և ժողովրդին բեռները բառնալու՝ գիւրացեալով երկրագործական աշխատութեան պայմանները: (Այս տողերը թարգմանած պահուստ չի կրնար զգուպել ինքնին յոգնած էլ չու մը զէմ. քին վրայ ժգիտ մը ելեւակայելէ և Պետրոսի նետած սուտերուն առթիւ երեք անգամ խօսող քաղաքացին այս պարագային երեք հակիթ անելու հաւանականութեան վրայ մտածելէ): Անողորմ յուսաբարութիւն մը խորտակեց մեր ակնկալութիւնները: Ազգին ներկայացուցիչները, փոխանակ ինքզինքնին նուիրելու օգտաշատ օ

րէնսդրութեան գործին. թափուեցան իրենց կարողութեան վեր մը ինտրոտներու մէջ և սկսան մեր կողմէ սահմանուած տեղական իշխանութիւնները քննել, զիտուութիւններ ընել հիմնական օրինակ թեթեւութեան ներու վրայ, որոնք միմիայն մեր կայսերական կամքով կարող են բարեփոխուիլ: Կարծ խօսքով, Ազգին ներկայացուցիչները իրապէս աղօթի տարաբնու ձեռնարկեցին, ինչպէս Տուժանի կողմէ ազգին կոչը Գիւրացիք վրդովուած այսպիսի անհեթեթեաններէ, և իրենց վիճակին ամբողջ յոյս մը չը տեսնելով ծայր տուին, շարք մը նահանգներու մէջ, ազատ աւարտութեան, և այլոց կայսրածներու ջնջման ու օրէնքի և օրինական իշխանութեանց զէմ անհնազանդութեան: Բայց մեր հպատակները պէտք է յիշեն որ ժողովրդի ճակատագրին բարեօրոշումը չենար է կատարելու կայսրացի ու խաղաղ պայմաններու ներքեւ միայն: Բոնի ու ապօրինի արարքներ պիտի չը թողարկուին, և պիտի յարգուանք սեր կայսերական կամքը անհնազանդին՝ սկիւնական ոյժի ազդեցութեամբ:

Կոչ կընենք բոլոր բարեացակամ ուսններուն միանալ՝ պահպանելու օրինական ոյժը և խաղաղութեան վերահաստատումը մեր Սիրելի Հայրենիքին մէջ:

Թո՛ղ անդորրութիւնը վերիշխէ ուսական հոգին վրայ, Թո՛ղ Աստուած օգնէ մեզ մեր պարտաւորութեանց զխաւարագոյնը իրագործելու այսինքն գիւրացիներու կայսրութեան բարեւուումը: Մեր կամքը այս կէտին նկատմամբ աշխատելի է, և ռուս հողագործը, առանց ուրիշի կալուածին ձեռնարկելու ըլլալու, պիտի ստանայ, այն պարագային որ իր հողը անբաւական է, ընդլայնում էր կայուածին:

Միւս դասակարգերու ներկայա-

ցուցիչները, մեր խնդրանքով, պիտի նուիրեն իրենց ջանքերը՝ այս մեծ գործի իրագործման, որ վերջնականօրէն պիտի կատարելագործուի ապագայ Տուժանի մը կողմէ օրէնսդրութեան կողմէ:

Լո՛ծելով Տուժան, կը հաստատենք մեր անժխտելի մտադրութիւնը այս հիմնարկութիւնը պահպանելու, և, ի վաւերումն սոյն մտադրութեան, 1907 Մարտ 5 կը սահմանենք թուական նոր Տուժանի կոչման՝ Մերակոյտին ուղղուած ութագրով մը: Անխախտ հաւատքով երկնային բարեփոխութեան և Ռուս ժողովրդի հասկացողութեան վրայ, նոր Տուժանէն պիտի ակնկալենք մեր ճիգերուն իրագործումը և իրենց օրէնքի ներթափանցումը համաձայն վերածին Ռուսաստանի պահանջներուն:

Հաւատարմով զաւակներ Ռուսաստանի, մեր Յարրը որպէս հայր մը իր զուգընդուն, կոչ կընէ մեզ զալ ու միանալ իրեն մեր սրբազան հայրենիքի վերածնութեան: Յոյս ունինք որ թէ՛ մտքով և թէ՛ գործով հսկաներ պիտի երեւան գան, և որ, շնորհիւ իրենց յարասեւ ջանքերուն, Ռուսաստանի փառքը պիտի տակաւին շարունակէ շողալ:

Ն Ի Ք Օ Լ Վ

Սյո՛ւ, քանի ճիւղերու խմբակը կը թսգաւորէ, կը գերիխանէ Ռուսաստան պիտի չը դադրի երբէք փայլել իր անասնականութեան, մայրականութեան, բունակալութեան ու վառտալիցի փառքով, որպէս արատ մը մարդկային սնունդ եւ զըզուանքի ու շողկանքի մշտնջենական առաքիլայ մը լուսաւոր աշխարհին: Յորովի այս վերջին վարմունքը արծառնացաւ, ինչպէս կակիկալուէր, բացարձակ պզտիկի ամէն կարգի ու գոյնի պատկանողներէ: Անգլիական մամուլը, ազատական, պահպանողական թէ արժասական, բոլորն մէկ խօսքով խայանցին

զայն — լրբութիւն կոչելով: Ազատականները, որոնք այնքան ճիգեր կը թափեն սրբեկամական կապերը չը խզելու համար անուշ լեզու գործածել ամէն պարագայի տակ, կատարած են վերջին վարմունքէն, և իրենց ամենէն թիթու ազատականներն իսկ, ինչպէս ֆրոնթիս «Տէլի Երուզ» և այլն կարծի երկաթով գրած են իրենց առաջնորդողները այս առթիւ:

Յաջորդին կանգարողանամ սոյն կէտին աւելի մանրամասնօրէն:

Մ. ՅԱԼԱԿ

Հ Ի Ա Ի Է Բ

Ազգ. երկսեւ վարժարանները եկեղեցեայ բակին մէջ գտնուող վարժարանին մէջ կհարոնացնելու և Մանկագրտէպն ալ այլուր փոխադրելու խնդրոց վրայ խորհրդակցելու համար Հոգաբարձութեան անցեալ կիրակէ օրուան իրաւէրին շատ քիչ թուով աղագայները պատասխանած ըլլալով, ներկայիս կը փութայ կրկն հրաւիրել արգոյ հայ հասարակութիւնը ի խորհրդակցութեան այս Հինգշաբթի երեկոյ, 20 Յուլիս, ի ժամ 6, յ՝Ազգ. վարժարան:

Հոգաբարձութիւն լիայոյս է որ պատասխան ազգայինք պիտի հաճին այս անգամ ներկայ գտնուիլ որոշեալ ժամուն, վերոնշանակեալ յոյժ կենսական խնդրոց վերջնական կարգադրութեան մասին իրենց կարծիքն ևս յայտնելու:

Հոգաբարձութիւն Ազգ. երկսեւ վարժարանաց (կնիք)

Օ՛ր, «ակամայ» սխալ եւ եթէ գոյութիւն ունի՝ այդպիսի բան մը... Ակամայ, ակամայ սխալ թողուլ զիս միայնակ առնելու նը եւ ուրիշներու արուած անտէ վունները յարգել, ուրիշներու...

Անձէ՛լ, յանուն Աստուծոյ, Անձէ՛լ, չնդմիջեց երիտասարդը սարսափահար, դու եւս լաւ գիտես թէ ըսածներդ ունայն խօսքեր են, Լոր ջօրէն կը խօսիս ատենք:

—Լըջօրէն, անշուշտ... հոյակապ սիրահար մը, այնպէս չէ՞, Թատրոն երթալ, հրճուիլ հոն շարք մը կանանց հետ եւ անոնց ալ առիթ տալ Անձէ՛լի փիփին խնդալու... Սո՛ւտ են ասոնք թէ... «ակամայ սխալ»...

—Անձէ՛լ, կը խոստովանուիմ, խօսքերդ անհասկանալի են ինձ. նպատակդ հասկնալ կարող չեմ...

—Ինչպէս արար, Բայց երբ ըսեմ թէ պարոն Արսէն, Անձէ՛լը սիրել պատրուակելով, դուրսը ուրիշներ եւ մասնաւորապէս խոշոր, ուղտա նման Մառսէլը սիրոյ գգուածքնե րով կը պարփակէ, այն ատեն հասկնալի է կարծեմ...

—Ո՛հ, Անձէ՛լ, ո՞վ գրաւ այդ զրպարտիչ խօսքերը հրեշտակային շրթներով վրայ... Մառսէ՛լ, Մոտ սէ՛ր... Կայ արդեօք մէկը որուն զիջած ըլլամսիրոյ խօսք մը, չոր զը գուանք մը բացի, բացի քննէ... Ինչո՞ւ այդպիսի անարդար զրպար-

տութիւն, Անձէ՛լ, ի՞նչու... Չը համոզուեցա՞ր տակաւին՝ թէ ինչ պիտի ուխտով մը նուիրուած եմ քեզ, կարելի՞ է արդեօք տարակուսել մէկու մը վրայ՝ որ ոչ միայն կը սիրէ, այլ եւ կը պաշտէ քեզ. Անձէ՛լ, սիրելիս, խաբած են քեզ, մեզ գտնեցնելու անամօթ ու պզգալի սեւեւով:

Թող ըսեն ինչ որ կուզեն. դու գիտես ի՞նչ ճշմարիտ չեն ասոնք: Ունեցած ես բազմաք մը որ անիրագործուած թողուց. յայտնած ես արդեօք քաղաքի մը որ ծխտեմ ու անտեսեմ. Չէ՛, Անձէ՛լ, չէ...

—Ապացոյցներ ունիմ ըսածիս ու պէտք է որ հաւատամ: Ուրիշներ չէ որ պատեցին, այլ ես տեսայ, ես անձամբ: Ո՛ր է իր նախորդ իրիկուներ, որո՞ւ հետ. խօսէ, փաստաբանէ տեսները...

—Անձէ՛լ... —Ա՛հ, պատասխան չկայ... ակամայ սխալ... Ո՛ր զիս խաբել թէ ընկեր մը պիտի տեսնես...

—Անձէ՛լ, խաբած չեմ քեզ, եւ ո՞վ որ հաղորդեց սոյն ամբաստանութիւնը, կրնար ըսել որ երկու ընկեր եւս կային հետս ու այդ յիշատակած յետոյ որ զտանման՝ Մառսէ՛լը, որուն հետ տաս բառ իսկ չը փոխանակեցի, կը պատկանէին ընկերներու եւ ոչ թէ ինձ: Անձէ՛լ, կը կարծեմ թէ քեզ նման հրեշտակէ մը վերջ այդպիսի «ուղտ» մը սիր-

բեմ, ոչ, չըսեմ այդ բառը, վրան նայիլ զիջիմ, Մոտցիր, հոգեակս, Մոտցիր...

—Այո՛, հար չէ ուղտ մը սիրել բայց հնար է անոր հետ պարել, խնդալ՝ կարծեմ երեկ գիշերուան պարի միջոցին փոխանակուած դօմբ իմաններն այլ ընկերով չէին պատկանիր ու այդ պահուն տողտը «հրեշտակէն» աւելի արժէք ունէր:

Արսէն դառն ժպիտ մը փորձեց, բռնագրօսիկ մպիտ մը, որ տոգոնապալի վշտալիութիւն մը ունէր մէջը:

—Ա՛հ, կը հասկնամ հիմա. պզտիկ նախանձի վէճ մը, հէ՛. բայց կը տեսնես թէ նորէն ակամայն էր. Հոգ չէ, այսուհետեւ այդ ալ չըլլար. ես կը խորհիլ որ իմ հրեշտակս այդքան նախապաշարուած հոգիով չէ, ներուած է, Անձէ՛լ, աւելցոց երիտասարդը, խնդալով:

—Որքան Ռուսիս ես, իմ այսպէս նուաստացումս տեսնելով լըրճուկ պատաւած Մառսէ՛լի մը կըզգէ. Լաւ այսուհետեւ չագէ՞օն ա սօն կու. ես ալ գիտեմ իմ բռնելիք վարմունքս: Ս ո ը վ ու ա ո, կարող ես հիմա սզատօրէն այսպիսի Մառսէ՛լիդ... —

Ու այս խօսքերով ուղղուեցաւ դրան, սակայն երիտասարդը, ոստով մը, անտարբեր օրիորդի մերժումի խօսքերուն, գրկեց զէնի, սեղմեց կուրծքին, զրօշմեց անոր-

քողապատ կարմրած այտերուն վրայ քանի մը սենցոտ համբոյրներ ու ապա, տարաւ երկարեց ո ս գ ի ն կ շ է ո ի մը վրայ:

—Անձէ՛լ, որքան որքան կը ցաւ իմ քեզ այսպիսի յուզում պատճառելուս. ո՛հ, հոգեակս, եթէ միայն գիտնայի թէ ատենք հաճելի չեն քեզ, չէի մօտենար իսկ ուրիշին. այո, սիրելիս, եթէ լոկ քու հետք ըլլամ, ճգնարանն ալ տանելի է ինձ համար: Պիտի ներե՞ս, տարփելիս, պիտի ներե՞ս... Հաւատացիր եւ դու հաւատալու ես առանց իմ թիթաղութիւնս, գիտնալով իմ անասնամանքս քեզ հանդէպ, որ ոչ մէկ զգացում տածած չեմ, ըլլայ սոյդ Մառսէ՛լ կոչուած տխմարին, ըլլայ այդ Մառսէ՛լի հարստութիւնը դու ես, միմիայն դու:

—Ես ալ նոյնը խորհելու դժբաղդութիւնը ունէի, բայց հիմա կը տեսնեմ թէ շարաշար սխալուած եմ, ակաւիտօրէն սխալուած: Ուրի՛ն, թող, թող որ երթամ: Պէտք է ես ալ իմ հաճոյքներս ուրիշ տեղ փնտռեմ:

(Շարունակելի)



Ա Ձ Դ

Սոֆիայի Ազգ. երկսեռ վարժարանիս համար վարժուհիի մը պէտք ունինք. ուստի կը խնդրենք որ փոփոքողներ բարեհաճին իրենց պայմաններն անյապազ յայտնել :

Ի դրմաց թագ. խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Թ Ներսիսեան Բ. Ասկէրեան
(կնի.)

ԱՉԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Պալատէն Տրապիզոն զրկուած հազարապետ Նէճիպ պէյ որ Տըրապիզոնի նաւամատոյցին հրահրուած պաշտօնը կը կատարէ բոլոր հայ ճամբորդներուն շափազանց նեղութիւն կը պատճառէ և կաշառք շառած ոչ ոք կը թողու որ անցնի : Կարգ մը օրինաւոր անցագիրներ ունեցողները որոնք ուրիշ տեղեր վաճառակաւ նուրբամար կը գրաւին և որոնք իրենց ծննդավայրը երթալ կուզեն՝ Տրապիզոնի նաւահանգիստէն ետ կը դարձուին, կաշառք տուողները կարճակունքն : Նոյն պէս քաղաքէն վաճառակաւ նուրբամար մեկնող այր մարդոցմէ զատ, իրենց ամուսիններուն կամ զաւակներուն քով երթալու համար ճամբայելող և օրինաւոր անցագիր ձեռքերնին ունեցող կանայք նաև իրենց ճամբէն ետ կը դարձուին :

Նէճիպ պէյէն զատ, Բուհի և Էօճէր Լուիֆի անուն անպիտանները մէյմէկ պատճառներով շատ մը հայեր կը կողոպտեն և կամ բանտերու մէջ կը մաշեցնեն :

Շատ մը երեւակայական ամբաստանութիւններ կը ծանրանան իրենց վրայ, ի մասնաւորի արտասահմանի յեղափոխական մարմիններու հետ հազորդակցութիւն և ի միջի այլոց, Ալեքսանդրիոյ վերջին Դաւաական Երեսփոխանական Ժողովը ընտրութեան ծանուցումին մէջ Տ. Միհրան Տամասեանի անուն յիշատակութիւնը :

Այս օրերս արդէն Հայերու ձեռքակալութիւններ կրկին շատցած են և նամակագիրը ասոր պատճառ ցոյց կուտայ ծանօթ յեղափոխական գործիչի մը վերջերս Պոլիս հասնիլը :

— Վերջերս Քիւրախիսթան այցելող ճամբորդ մը կը նկարագրէ թէ քիւրապէյերը ինչպէս հանգիստ կերպով կը ջնջեն հայ գիւղերը՝ ձամբորդելով մէկ այլոց կը գրէ. «Տիար պէյերը և շրջակաները ճամբորդութեանս ժամանակ հասալ մինչեւ Զօկ Բաղէշէն 18 վերստ հեռու : Այժմ անկատարի կ'ընդունուի կը կատարուի այն

ինչ որ այնքան ազնուկ հանեց 10 տարի առաջ Սասունի մէջ : Այդ շրջան կը 55 գիւղերէն, եօթնէն զատ, մնացածները ւերակներ եղած են, իսկ այդ եօթնէն ալ բնակչութիւնը շատ պակաս է : Բրտփանը որ ես 3 տարի առաջ այցելած էի, 100 տունի չափ պակաս է այս 3 տարուան մէջ : Բնակչութիւնը Պէյլար և Ճէմիլ անունով երկուքիւրտ կը գրաւեն որոնք իշխանութեան ենթարուած է. առաջինը կը յանդգնի նոյն իսկ կառուցարարութեան գէժ գնել : Մենք այդ գիւղէն երկու վերստ հեռուէն անցանք ուր անկաւ նոր հրացաններով զինեալ 400 հոգոյ գլուխը անցած՝ կը պատրաստուէր գիւղացիներու կառավարութեան զօրքերու յայձակման : Զօրքերը գրաւած էին մտակալ 3 գիւղեր և կը պատրաստուէին յարձակիլ այդ քիւրապէյ տին վրայ, բայց հասկցուեցաւ թէ անոք իրենց ուժը անբաւական կը գտնէին զայն բանիւր և անոր խումբը ցրուելու : Աստի կը ընդհատուի իրենց յանձնարարը և այն գիւղերուն ուր տեղաւորուած են զինուորները :»

(Նկուսարեք)

ՆԵՐՔԻՆԻ ԼՈՒՐԵՐ

Պուլկարիոյ մէջ հակառակական ցոյցերը օր օրի վրայ խիստ կերպարանք կառնեն : Վառնայէն յետոյ միւրիպէյի Պուրկ զի և Սթանիմարայի մէջ պուլկար հասարակութիւնը, հակառակ կառավարութեան միջամտութեան հակառակական միջոցները սարքած և եկեղեցիներ, մինչեւ իսկ զարդերը գրաւած է : «Տոհմասէրներու ընկելութեան կողմէն եռանկուն բրօքական կը մղուի յոյններուն գէժ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Եմէնի վ. ճակը հեռուցեալ կը ծանրանայ. բազմաթիւ թուրք զինուորներ կամ բանակէն դատարի կը լլան կամ կանցնին արտերներուն կողմը : Պարսկաստանի սահմանագլուխը պտնուող թուրք զինուորներէն ալ շատեր կը փախին :

— Չերբակալուած հայ խմբագիրները զեռ սպաս շեն այձակուած. Հայոց Պատրիարքին հըրաժարման խնդիրը առկախ մնացած է. Սուլթանին կազմած յանձնախումբը զեռ իր եզրակացութիւնը յայտնած չէ :

— Երոպական թերթերուն մէջ կրկին լուրեր կը պատին որ Սուլթանը ծանրապէս հիւանդ է և մեծ ճիգեր կը թափէ որ իր պատիկ օրդին, հակառակ թուրքական սովորութեան, Սուլթանական զահըրայ ձրանայ, թուրքիոյ սովորութիւնն է որ արքայ յական սերնդի մէջ ամենէն տարիւրտոր այր մարդը զահըրաժարանայ :

— Սուլթանի գահակալութեան օրերը մտանցած ըլլալուն պատճառով՝ խստութիւնները հայերու հանդէպ աւելցած են :

Ո Ռ Ի Ո Ւ Ա

Շուշիի թաթարներու և հայերու միջև կրկին սոսկալի բնդ հարուժ մը տեղի ունեցեր է, կառավարութիւնը քաղաքը երկու օր թնդանալի բռնեք է և այդ պատճառով քաղաքի մէկ խոշոր մասը հրդեհուեր է :

— Ինթիպալուրի վերջերս վրէժնա եկած սեղեկութիւններէն կիւմացուի որ ուսու ընկեր վարականները որոշած են օգոստոսէն առաջ (հ. տ.) ոչ մէկ դիմադրութիւն չընեն կառուցարարութեան : Կոմիտէները իրենց գաղափարակիրներուն սղջարարած են որ ուժերնին շսպառն մասնակի գործաթողներով :

— Ինքնամիտ պաշտօնակոն թերթ մը կառավարութեան կազմարարէ ուսու կառավարութեան պաշտպան չը հանդիսանալ, որովհետեւ ոչ ինքնակալութիւնը և ոչ ներկայ ուժի մը այսուհետեւ կրնան Ռուսիոյ մէջ յարատեւել :

— Յուլիոս 16 ին Բեթերպուրկէն կը հազորդեն հետեւեալը խումբ մը անձառօթ մարդիկ խումբած են Ինցէլի տպարանը և զանորը պահապաններու հսկողութեան տակ անձելով՝ ձերբակալած են տպարանին կառավարիչը և գրաշարներուն ստիպած երեսփոխաններուն ոչը շարել : Այդ կոչէն տպագրուած է 150000 օրինակ :

— Մոսկուայի զինուորականութեան մէջ ապստամբական ոգին խիստ զարգացած է. հակառակ խիստ հսկողութեան զինուորներուն ձեռք մեծ քանակութեամբ յեղափոխական գրուածքներ և թերթեր կանցնին :

ՅՈՒՆԱՍՏՆ

Սթէնքի քաղաքապետին նախագահութեամբ հակապուլկարական մեծ միջոցներ տեղի ունեցեր է Աթէնքի մէջ : Յոյն կառավարութեան կը պահանջուի ուղղակի պատերազմ հրատարակել Պուլկարիոյ գէժ և ոչ թէ վերջ տալ Մակեդոնիա զացող հրօսախմբերում, այլ ընդհակառակը ոյժ տալ :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նկարիչ Ֆէթիհաճեանի Անիի աւերակների գունաւոր եւ գեղեցիկ այրուիները եւ փոստ քարտերը 'եծ քանակութեամբ ծախուում են վրէժնայում պ. Գ. Ամատունու մօտ :

Այրուի գինը, փոստի ծախքով, 3 քրօն է. իսկ փ ստ կալտերի հատր փոստի ծախքով 20 հելլէր :

Պէտք է գիտել հետեւեալ հասցէին. Գ. Ամատունուի Երկուս Կաս թիւ 3 դիր 32. Վրէժնա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ ՎԱՐՄԱՐՆԵՐ

1902 Ն. (Չուրիցի) 5-րդ տարեշրջան

Հօգանի հայ կրթարանը սահմանափակ թւով աշակերտներ կը նշանակուի Աշակերտներու ընդունելութիւնը սեղի կուսնայ մինչեւ Սեպտեմբրի սկիզբը, այն ատեն կը սկսին գասախօսութիւնները :

Աշակերտներու ընդհանուր կրթութիւնը կը կատարուի տեղական պետական ուսումնարաններուն մէջ. եւ ազգայինը, ինչպէս և թոյլ առարկաներու պատրաստութիւնը՝ կրթարանի մէջ : Ընտանեկան կեանք : Կրթարան ունի Քրանսերիւնի եւ գերմաներէնի համար եւրոպացի ներքին օգնականներ :

Ընդունելութեան տարիք՝ 8-15 : Հինգ աշակերտներ զեղով կը նշանակուին :

Մանրամասնութիւններու համար կարելի է գիտել Տիար Յ. Ս. Փափազեանին, (Ատամարոյ) վառնա, կամ Տիգրէնի հետեւեալ հասցէով : Ինչ որ թիւ և և ր մ է ն ի է ն 1902 Ն. [Սուխ]

Ա Ռ Ո Ւ Ն Կ յ

Հանգիստ գեղարուեստական (երաժշտութիւն, ճարտարապետութիւն, եւն)

(Կոմսեայ)

- «Կոմսեային» նպատակն է՝ 1. Հայ արուեստը ճանչցնել, հայուն, 2. Երոպ. արուեստը ճանչցնել հայուն, 3. Հայ արուեստը ճանչցնել եւրոպային :

«Կոմսեային» տարեկան բաժնեգրին է

| | |
|---------------|-----------|
| Երոպայի համար | 10 ֆրանք |
| Ամերիկայի | 2 դալէր |
| Ռուսիոյ | 4 ռուբլի |
| Անգլիոյ | 8 շիլին |
| Տաճկաստանի | 50 դահկան |

«Կոմսեային» օրինակ մը իրր նմուշ ձրի ստանալու համար պէտք է գրել հետեւեալ հասցէով՝

Գ. Բրօքէսէօր Գալփասեան, Տիգրէթէօր-Ռէտաքթէօր «Կոմսեային» 159, պուլկար Մօսքարնաս Բարիզ

Ա Ղ Ա Ս Ի

Ձէյթունի հերոսներ գիւցազներգութիւն, հինգ արարուած, եօթը պատկեր : Գրիլ Հեղինակին՝ փոսթ ուսթանթ, Գալփէ, Եգիպտոս Գին Քր. 1.50